

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 25(2)

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի ընդարձակ նիստի

ք. Երևան

28 հուլիս 2008 թվականի

Նախագահում էր՝

S. Սարգսյան՝ - Հայաստանի Հանրապետության վարչապետ, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ

Մասնակցում էին՝

- Ա. Հակոբյան - ՀՀ վարչապետի խորհրդական
- Ա. Ավետիսյան - ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
- Ռ. Հարությունյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ, գլխավոր տնօրեն
- Ա. Գրիգորյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության պետ, խորհրդի քարտուղար
- Յ. Շուքրյան - ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս
- Գ. Չուգասզյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ
- Ա. Ալեքսանյան - «Արմինկո» ՍՊԸ համատեղ ձեռնարկության տնօրեն
- Ա. Տոնոյան - «Վեբ» ՍՊԸ-ի նախագահ
- Մ. Մարկոսյան - «Երևանի կապի միջոցների ԳՀԻ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ
- Հ. Ավոյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության նախագահ
- Գ. Կարապետյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի նախագահ
- Գ. Էվոյան - «Հայլինք» ՍՊԸ-ի տնօրեն
- Գ. Խաչատրյան - «Լինք» ՍՊԸ-ի տնօրեն
- Վ. Մասերեջյան - «Վիրաժ Լոջիք» ամերիկյան ընկերության մասնաճյուղի գործադիր տնօրեն

- Վ. Հակոբյան - «Ալգորիթմ-Սերվիս» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- Ա. Մխիթարյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցում» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- Լ. Մինասյան - Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի գործադիր տնօրեն
- Հ. Վարդանյան - «Էյ Փի Ջի Լեքս» ՍՊԸ ՀՄ-ի տնօրեն
- Է. Մանուկյան - «ԻՍՄԱ» ՍՊԸ-ի տնօրեն
- Ա. Բալդրյան - «Յունիքումի» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
- Վ. Ալեքսանդրյան - Կառավարման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների համալսարանի ռեկտոր
- Ս. Մուրադյան - «Ավիաինֆոտել » ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- Հ. Խանջյան - «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ
- Ռ. Աղգաշյան - Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պրոռեկտոր
- Ռ. Աթոյան - «Երևանի ավտոմատ կառավարման համակարգերի ԳՀԻ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- Գ. Հովհաննիսյան - «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- Հրավիրվածներ`
- Ն. Երիցյան - ՀՀ Էկոնոմիկայի նախարար
- Վ. Մարուխյան - ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի ղեկավար
- Մ. Հարությունյան - ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
- Հ. Սահակյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
- Ա. Քուչուկյան - «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժիներ
- Գ. Բարսեղյան - «Մայկրոսոֆտ» ընկերության հայաստանյան ներկայացուցչության տնօրեն
- Ա. Մանուկյան - «ԻՍՄԱ» ՍՊԸ-ի առաջատար մասնագետ
- Կ. Վարդանյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն
- Ժ. Ազիզյան - ՀՀ Էկոնոմիկայի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման վարչության պետ
- Հ. Չոբանյան - «Նորք» տեղեկատվական կենտրոնի տնօրեն
- Հ. Ալեքսանդր - CAPS ծրագրի տնօրեն

- Ա. Արբահամյան - CAPS ծրագրի SS կլաստերի համակարգող
- Մ. Բարսեղյան - «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրենի տեղակալ
- Ա. Սարգսյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ
- Լ. Եղիազարյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգի» մասին  
ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյան
2. Արբանյակային ալեհավաքների տեղադրմանը խոչնդոտող հանգամանքների վերացման առաջարկի մասին  
ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյան
3. Ազատ օպտիկական մալուխների նպատակային տրամադրման կարգի մասին  
ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ Վ. Առաքելյան
4. Առաջարկություն հայերեն-անգլերեն երկկողմանի թարգմանչական ծրագրային փաթեթին հնարավոր աջակցություն ցուցաբերելու մասին  
ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյան
5. 2008 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումների մասին տեղեկատվության ներկայացում  
ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյան
6. Երկու հարց ՀՀ Հարկային օրենսդրության վերաբերյալ  
«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն Բ. Ենգիբարյան
7. Այլ հարցեր:

1. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգի» մասին

-----  
-----

(Տ. Սարգսյան, Ն. Երիցյան, Գ. Չուգասյան, Ա. Քուչուկյան)

1. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը ներկայացրեց ձևափոխված «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգի» կառուցվածքը և հիմնական դրույթները՝ ՏՏ զարգացմանն աջակցող խորհրդի անդամների կողմից արված դիտողությունների և առաջարկությունների արդյունքում:
2. Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում հիմնականում ասվեց, այն որ այս տարբերակը փոխզիջումային է, և որ այս տեսքով «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգը» ավելի իրատեսական և ընդունելի է:
3. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ՝ Տ. Սարգսյանն առաջարկեց հավանության արժանացնել «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգը»: Առաջարկն ընդունվեց:

2. Արբանյակային ալեհավաքների տեղադրմանը խոչնդոտող հանգամանքների վերացման առաջարկի մասին

-----  
-----

(Տ. Սարգսյան, Ն. Երիցյան, Ռ. Աղզաշյան, Ա. Գրիգորյան)

4. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը ներկայացրեց ՀՀ-ում արբանյակային կապի ամրակցված կայանների ներկրման, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման գործընթացի պարզեցմանն ուղղված առաջարկություններ՝

1. Արբանյակային կապի ամրակցված կայանների ներկրում. վերացնել լրացուցիչ վճարումը, ներկրման գործընթացը վերադարձնելով ընդհանուր հիմքերին, ինչպես նաև ներկրման ընթացքում անհրաժեշտ բոլոր թույլտվությունների տրամադրման գործընթացը փոխարինել ներկրումից հետո 5-օրյա ժամկետում մեկ պատուհանի սկզբունքով տեղեկացնելու գործընթացով:
2. Ռադիոհաճախականության տրամադրման գործընթացի ժամկետը. թույլտվության տրամադրման ողջ գործընթացը սահմանափակել գումարային 5 աշխատանքային օրով:

3. Թույլտվության տրամադրման վճարներ. թույլտվության տրամադրման արժեքը սահմանել ոչ ավել քան 200,000 դրամ (յուրաքանչյուր կայանի համար՝ անկախ քանակից):
4. Ռադիոհաճախականության օգտագործման վճարներ. ռադիոհաճախականության օգտագործման տարեկան արժեքը սահմանել ոչ ավել քան 100,000 դրամ (յուրաքանչյուր կայանի համար՝ անկախ քանակից):
5. Հաճախականության տրամադրման հայտի փաստաթղթերը. ապահովել Կարգավորիչի 2006թ. 28-Ն որոշմամբ հաստատված Կարգի թ.1 Հավելվածի (Ռադիոհաճախականության օգտագործման թույլտվությունների տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ՑԱՆԿ) 2-րդ և 3-րդ կետերի 2007թ.-ից ուժը կորցրած ճանաչված լինելու փաստի կիրառումը և ապահովել «Մեկ պատուհանի» սկզբունքով տեղեկացման ընթացակարգը:
5. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ՝ Տ. Սարգսյանն առաջարկեց ամբողջությամբ հավանության արժանացնել ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի ներկայացրած առաջարկություններն ու կառավարության անունից այն ուղղել համապատասխան մարմիններին: Առաջարկն ընդունվեց:

3. Ազատ օպտիկական մալուխների նպատակային տրամադրման կարգի մասին

-----

-----

(Տ. Սարգսյան, Վ. Մարուխյան, Ն. Երիցյան, Ս. Մուրադյան, Ն. Խանջյան, Գ. Չուգասյան, Ա.Ալեքսանյան, Գ. Կարապետյան, Մ. Մարկոսյան, Ա. Տոնոյան, Հ. Ավոյան, Կ. Վարդանյան, Յ.Շուքուրյան, Ա. Գրիգորյան )

6. ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի ղեկավար Վ.Մարուխյանը ներկայացրեց հյուսիս-կենտրոն օպտիկա-մանրաթելային մալուխի մասին տեղեկատվություն առ այն, որ ՀՀ ՏՐԱՍԵԿԱ ծրագրի շրջանակներում ՏԱՄԻՍ-ի «Հեռահաղորդակցության ցանց կովկասյան երկաթգծերի համար»՝ «Հայկական երկաթուղի» ՓԲ ընկերության ներքին և արտաքին հեռախոսային, ազդանշանային և կառավարման համակարգի համար 2004 թվականին անց է կացվել Երևան-Այրում 312 կմ երկարությամբ օպտիկա-մանրաթելային մալուխ, որը չի գործարկվել մինչև 2006 թվականը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի «ՏՐԱՍԵԿԱ ծրագրի շրջանակներում ՏԱՄԻՍ-ի «Հեռահաղորդակցության ցանց կովկասյան երկաթգծերի համար» ՄՍ-9901 ծրագրի ֆինանսական հուշագրով

նախատեսված միջոցառումներն իրականացնելու մասին» թիվ 766 որոշման 6-րդ կետի «բ» ենթակետը՝ «Հայկական երկաթուղի» ՓԲ ընկերության և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ՍՊ ընկերության միջև կնքվել է N 130 ֆ մալուխի (16 մանրաթելի) վարձակալման պայմանագիր՝ 25 տարի ժամկետով՝ հաշվի առնելով Համաշխարհային Բանկի պահանջը, առ այն, որ այդ մալուխում երկաթգծի կարիքների համար բավարար է 8 մանրաթել:

7. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը առաջարկեց ուսումնասիրել հյուսիս-կենտրոն օպտիկա-մանրաթելային մալուխի օգտագործման արդյունավետությունը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ մանրաթելային մալուխը հանդիսանում է պետական սեփականություն, ուստի առաջարկվեց ուսումնասիրություն իրականացնելու համար ստեղծել փորձագետների խումբ, որը կուսումնասիրի «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ՍՊ ընկերության կողմից «Հայկական երկաթուղի» ՓԲ ընկերությանը պատկանող օպտիկա-մանրաթելային մալուխի օգտագործման արդյունավետությունը: Առաջարկվեց նաև դիմել Համաշխարհային Բանկին փորձագետների խմբին աջակցություն ցուցաբերելու համար:

8. Տեղի ունեցան քննարկումներ, որոնց արդյունքում արտահայտվեցին մտքեր և արվեցին առաջարկներ:

9. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ՝ Տ. Սարգսյանն առաջարկեց ընդունել ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի առաջարկը՝ ստեղծելու փորձագետների խումբ «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ՍՊ ընկերության կողմից «Հայկական երկաթուղի» ՓԲ ընկերությանը պատկանող հյուսիս-կենտրոն օպտիկա-մանրաթելային մալուխի օգտագործման էֆեկտիվությունը ուսումնասիրելու համար և դիմել Համաշխարհային Բանկի փորձագիտական խմբին աջակցություն ցուցաբերելու համար: Առաջարկներն ընդունվեցին:

4. Առաջարկություն հայերեն-անգլերեն երկկողմանի թարգմանչական ծրագրային փաթեթին  
 հնարավոր աջակցություն ցուցաբերելու մասին

-----

(Տ. Սարգսյան, Ն. Երիցյան, Ս. Մուրադյան, Լ. Մինասյան, Հ. Ավոյան, Կ. Վարդանյան, Ռ. Հարությունյան, Մ. Մարկոսյան, Գ. Չուգասոյան, Հ. Խանջյան, Յ. Շուքուրյան, Ա. Գրիգորյան)

10. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը ներկայացրեց առաջարկություն հայերեն-անգլերեն երկկողմանի թարգմանչական ծրագրային փաթեթին հնարավոր աջակցություն ցուցաբերելու մասին: Մասնավորապես, նա առաջարկում էր ԻՍՄԱ ՍՊԸ կողմից մշակված հայերեն-անգլերեն երկկողմանի թարգմանչական ծրագրային փաթեթի պետական ֆինանսական աջակցությունն իրականացնել ՀՀ ՓՄՁ ՋԱԿ-ի միջնորդությամբ՝ կապիտալի (Ծրագրային) ֆինանսավորման երեք էտապային սխեմայով:

#### 1. Նախնական փուլ

բանակցությունների վարում, սահմանված չափանիշներով, գործարար ծրագրի ֆինանսավորման շուրջ, ռիսկերի գնահատում, բիզնեսի գնահատում (EBITA, EBITDA, եկամտային/ծախսային մեթոդ), ներդրվող գումարի և ընկերության ընդհանուր կապիտալում ձեռք բերվող մասնաբաժնի չափի որոշում, ֆինանսավորվող ծրագրի ժամկետների սահմանում, ելքի ձևաչափի սահմանում (exit route)

#### 2. Ընթացիկ փուլ

ընկերության կազմակերպարավական ձևի փոփոխություն, կանոնադրական կապիտալի համալրման վերաբերյալ հիմնադիր ժողովի արձանագրություն, սեփականատերերի ռեեստրի վարման հանձնում ՀՀ Կենտրոնական դեպոզիտարիային, սահմանված գնով բաժնեմասի ձեռք բերում և համապատասխան գրանցում ՀՀ Կենտրոնական դեպոզիտարիայում, նոր կազմով ընկերության խորհրդի հաստատում և կազմակերպությունում փորձառու կառավարչի ներգրավում, ընկերության ռազմավարական ծրագրի հաստատում

#### 3. Վերջնական փուլ

ռազմավորությամբ հաստատված յուրաքանչյուր փուլի առևտրայնացում, ապրանքի դիզայն, գին, ծավալ, վերջնական սպառման տեսք, ֆոնդային բորսայում արժեթղթերի ցուցակում և բորսայական առևտրին մասնակցության իրավունքի ձեռք բերում, ֆոնդային բորսայում բաժնեմասի վաճառք:

11. Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում արտահայտվեցին մտքեր և արվեցին առաջարկներ:

12. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ՝ Տ. Սարգսյանն առաջարկեց ժամանակավորապես դադարեցնել այս հարցի

քննարկումը և հանձնարարեց ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին ևս մեկ անգամ խորհրդակցել պրոֆեսոր Է. Մանուկյանի հետ և հաջորդ նիստին շարունակել քննարկումը:

5. 2008 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումների մասին տեղեկատվության ներկայացում

-----  
-----

(Տ. Սարգսյան, Ն. Երիցյան, Ռ. Աղգաշյան, Գ. Չուգասզյան, Կ. Վարդանյան, Ա. Բաղդրյան)

13. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը ներկայացրեց 2008 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումների մասին տեղեկատվություն:

14. Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում արտահայտվեցին մտքեր և արվեցին առաջարկներ: Մասնավորապես, առաջարկվեց ստեղծել աշխատանքային խումբ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումները կազմակերպելու համար:

15. Որոշվեց ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին ստեղծել աշխատանքային խումբ՝ պատրաստելու և ՀՀ Վարչապետին ներկայացնելու «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումների վերջնական ցանկը, կազմակերպչական և այլ խնդիրների լուծմանը վերաբերող առաջարկների փաթեթը:

6. Երկու հարց ՀՀ Հարկային օրենսդրության վերաբերյալ

-----  
-----

(Տ. Սարգսյան, Մ. Բարսեղյան, Ն. Երիցյան, Կ. Վարդանյան)

16. «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրենի տեղակալ Մ. Բարսեղյանը ներկայացրեց երկու հարց ՀՀ Հարկային օրենսդրության վերաբերյալ՝

1. Հիմնական միջոցների նվիրատվություն ոչ առևտրային կազմակերպություններին - ԱԱՀ: Առաջարկեց ՀՀ կառավարության որոշումների հիման վրա իրականացնել



ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման անհատույց գործարքներ, որոնք ԱԱՀ- ով չեն հարկվի:

2. Կրթական ծրագրերի իրականացում – ոչ հարկային ծախսեր:

Առաջարկվեց, որպեսզի առևտրային իրավաբանական անձը կարողանա հարկային ծախս համարել ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց տրամադրած ապրանքների (հիմնական միջոցների) և ծառայությունների (կրթական ծրագրերի արժեքի) արժեքի միայն՝ իր տարեկան համախառն եկամուտի 0.25 տոկոսը չգերազանցող մասը:

17. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ՝ Տ. Սարգսյանն ՏՏՁԱ խորհրդի քարտուղարությանն առաջարկեց վերոնշյալ հարցերի շուրջ կազմակերպել քննարկումներ՝ հրավիրելով Հարկային պետական ծառայության և բիզնեսի ներկայացուցիչներին: Քննարկումների արդյունքում ձևավորել երկու կողմերի համար ընդունելի առաջարկներ և դրանք ներկայացնել հաջորդ նիստի քննարկմանը:

7. Այլ Հարցեր

Աշխատանքային խմբեր ստեղծելու մասին

-----  
-----

(Տ. Սարգսյան, Ն. Երիցյան, Գ. Չուգասզյան, Ա. Գրիգորյան)

18. «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ Գ. Չուգասզյանը առաջարկեց ստեղծել երկու աշխատանքային խմբեր՝

ա.«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգի» դրույթների և «ՀՀ էլեկտրոնայն զարգացման և մրցունակության բարձրացման» Համաշխարհային բանկի փորձագետների կողմից արված գեկույց առաջարկների քննարկման նպատակով:

բ. Էլեկտրոնային կառավարման վերաբերող հարցերի քննարկման նպատակով:

19. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի

նախագահ՝ Տ. Սարգսյանն առաջարկեց ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին և ՏՏԶԱ Խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ Գ. Չուգասզյանի առաջարկի հիման վրա ստեղծել աշխատանքային խմբեր:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ս Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ս Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ